

րել էր իւր հայրենիքի համար: Գերմանիան յանձին նորա շատ աւելի մեծ բան է կորցնում: քան Անգլիան յանձին Գլադստոնի: Բայց և ազգաց ընդհանուր պատմութիւնը կորցնում է մի շատ մեծ հերոսի: որի կենսագրութիւնը և պատմական նշանակութիւնը մի քանի տողերի մէջ ամփոփել կանոնաւ անտեղի փորձ կլինէր: ուստի բաւականաւ նուժ ևնք առ այժմ միայն նորա վախճանն արձանագրելով:

ԳՊՐՈՅԸ և ՈՒՍՈՒՑԻՉԸ.

(Ա.Գ.ՕԼԵ ԳԻՍԵԼԻՎԷԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԵՐԻՑ:)

(Շարունակութիւն վերջ) *

Այն վայրկեանում: երբ մարդ մի որ և է բան է անգիր անում: նորա հոգեկան միւս ընդունակութիւնները չեն կարող անարգել կերպով գործել: իսկ եթէ այդ անգիր անելը շատ կածախ է տեղի ունենում և կամ շատ երկար է տեւում: ապա ընթացում է հոգին: ծնչում և թուլացում է զգացմունքը և խելքը՝ առհասարակ բոլոր հոգեկան դժերը: և հասակն առած մարդուն անգամ աւելի ապուշ է դարձնում: Ապա ուրեմն աւելի ևս վատ հետեւները կունենայ անգիր անելը մանկան համար: որի մէջ նոր է զարթնում հոգեւոր կեանքը:

Անգիր սովորելը միայն այն դէպքում կարող է անունդ տալ: կազդուրել: և ոչ թէ ծնչել ու թուլացնել մանուկ հոգին: երբ չի անցնում որոշ սահմաններից: այլ հոգեկան դժերի մի մասը թողնում է ազատ: Աւրեմն այն դէպքում միայն կարելի է անգիր սերտել: երբ այդ լինում է ուրախութեամբ և առանձին հաճոյքով: ասել է թէ: այն ժամանակ: երբ յիշողութեան նիւթը աշակերտի հասկացողութիւնից բարձր չէ: ապա և ծնչող բռն չէ նորա համար:

Աշխարհումս մի բան չկայ աւելի զգուշի: հակակրկի և մինչև իսկ միանգամայն: անընկալ: քան ընթերցանութեան այն հնազարեան: միակերպ: անգոյն և անմիտ ձևը: որ գոյութիւն ունի մի քանի դպրոցներում: Այդպիսի ընթերցանութեան հետ կապուած է ռուսաւորներին: այլ և Քրիստոնէական վարդապետութեան հաստատների և վկայութիւնների միակերպ և արգել արտասանութիւնը: Նմանօրինակ թմրեցուցիչ և մեքենայական պարապմունքները լաւ միջոց են խելու երկտալից առողջ դատողութիւնը և մարդուն դարձնելու մի վարժեցրած թուլակ: որ սերտէ իրեն անհասկանալի բաներ՝ ապարդիւն անելու մանկան անկախ մտածողութեան բոլոր փորձերը: որով նա յախտեան ահաս վիճակի մէջ պէտք է մտնի: և առելի դարձնելու նորա համար ուսումն: քրիստոնէական վարդապետութիւնը: ուսումնարանն ու ուսուցիչը: և կեղեցին և քահանան:

Մեքենայական և մեռած ուսուցումը հոգեկան մահ է դպրոցի համար: Այն ինչ հոգեւոր արտասովոր դժ ունենալով միայն հնարաւոր է չձանձրանալ այդ լարուած աշխատութիւնից: որ կա-

պուած է միշտ միևնոյն տարրական ծանօթութեանց հետ: չընկնել հոգեկան քնոյ մէջ: չենթարկուել մահացուցիչ մեքենայականութեան և ամբողջ կեանքի ընթացքում օրէցօր ձգտել աւելի և աւելի արթնուն և կենդանի պահել հոգին: Քարանալու փառքը չափազանց մեծ է ուսուցչի համար: ուստի ուսուցիչները միւս մասնագիտութեամբ պարապողներից աւելի կարօտութիւն ունեն այնպիսի ազդեցութիւնների: որոնք շարունակ կեանք և արթնութիւն ներշնչել կարող են մարդուն:

Եթէ դու կամենում ես թուլանալ: միայնակ մնալ: եթէ կամենում ես զօրեղ լինել: միացիր քո սրտիդ աւելի մօտ արհեստակիցների հետ: — Առգմնակի մարդիկ երբեմն կարող են օգնել ուսուցչին: ներին և դպրոցին: բայց զիտուր գործը իրանք ուսուցիչները պէտք է կատարեն: միայն թէ ոչ բաժան բաժան: այլ միացած:

Այն ուսուցիչը: որին ոչինչ դէպի իւր գործի ընկերները չի ձգում անունով միայն ուսուցիչ է: Այն ուսուցիչը: որ պահանջ չի զգում միանալու միւս ուսուցիչների հետ: կարող է շատ հմուտ դասատու ևս լինել: բայց նորան կարելի չի լինի արժանաւոր անգամ համարել ուսուցչաց դասակարգի և նոցա ընկեր:

Ուսուցիչների դասակարգը մի ընկերութիւն պէտք է ներկայացնէ: որ ուղիղ ճանապարհի վերայ է գնում:

Մենք ոչ մի նոր բան չենք կարող արած լինել կրթութեան և ուսուցման գործում: եթէ շնորհքով գործին մեր ամբողջ էութեամբ: անդադար դէպի առաջ ձգտելով և զարգացնելով ու թարմացնելով մեր հոգին: Բայց ինչպէս կարող ենք հասնել այդ ամէնին: եթէ հեռու մնանք գրականութիւնից և չաշխատենք ծանօթանալ նորան: եթէ կենդանի հաղորդակցութիւն չպահենք մեր գաղափարակիցների հետ: որոնք դէպի նոյն նպատակն են դիմում: և չհետեւենք նոցա քաջալերիչ ձայնին:

Մինչև անգամ հզօր հոգու տէր մարդը հաւատացած պէտք է լինի: որ ինքը միայն չէ: որ իր պէս ուրիշ մտածողներ էլ կան:

Ուսուցիչների դաշնակցութիւնը մի խաղաղ դաշնակցութիւն է: որի անդամները ժողովուրդում են մտքեր փոխանակելու: իրար խրախուսելու և իրարից ուսանելու համար: Այստեղ գործ ունին ոչ թէ մանուկներ: այլ հասակաւոր մարդիկ: որոնք լատ են փորձուել: աշխատել և մտածել և որոնց միացնում է դէպի գիտութիւն ու յառաջադիմութիւն ունեցած բոլոր ձգտումը: Այստեղ արդէն ոչ թէ որ և է անձ: այլ ճշմարտութիւնը պէտք է լինի հեղինակութիւն:

Գպրոցի տուած կրթութեան չափն ուղիղ յարաբերական է ուսուցիչների գիտութեան չափին: եթէ կամենում ենք բարձրացնել դպրոցը՝ պէտք է բարձրացնենք ուսուցիչներին:

* Տես. Աւսուցչ. 1898 թ. համար է. եր. 317:

Թող ուսուցիչները երբեք չդադարեն լուրջ գիտնական գրադժուներին՝ մանաւանդ իւրեանց առարկային վերաբերեալ: Եթէ տարրական դպրոցի դասատուի մէջ մարի գիտնական եռանդը, նա անխուսափելի կերպով կընկնի մանկավարժութեան շար ոգիների ձեռքը, որոնք են՝ մեքենայականութիւն, միօրինակութիւն, անբարեխղճութիւն:

Ճշմարտութիւն որոնելն ու որոշել թէ ո՞րն է ճշմարտ՝ ոչ մի շրջանի մարդոց համար չունի այն նշանակութիւնը, ինչ որ այն մարդոց, որոնք կոչուած են ճշմարտութիւն տարածելու, այն է ուսուցիչների համար: Եթէ ուսուցիչը կամենում է ազդել ժամանակակից կեանքի վերայ, նա պէտք է ապրի այդ կեանքով:

Այն անձինք, որոնք կոչուած են ուսուցանելու, չպէտք է որ և է կուսակցութեան պատկանեն: Ոչ քաղաքական, ոչ կրօնական կուսակցական վեճերը դպրոցի հետ առնչութիւն չունին: Բայց դորանից չպէտք է եզրակացնել, թէ ուսուցիչն իրաւունք ունի հեռու մնալ ժամանակակից կեանքից, ժամանակի հոսանքին չենթարկուել և XIX դարում ապրել այնպէս, որ միևնոյն էր թէ մի ուրիշ դարում ծնուած լինէր: Մարդիկ իւրեանց դարի դաւաններ են, և պէտք է լինին, իսկ կրթուած մարդիկ իւրեանց դարի դաւան լինում են ոչ միայն բնազդօրէն, այլ և գիտակցօրէն:

Ուսուցչի համար մարդկային հասարակութեան մասին ունեցած ծանօթութիւնն եթէ ոչ աւելի, գոնէ ոչ պակաս կարեւոր է, քան թէ բնութեան ծանօթութիւնը:

Ուսուցչի ամենօրեայ հարցը միայն նիւթա-

կան սնունդը չէ, այլ նաև հոգեորդ, իսկ հոգեոր սնունդի համար պէտք են ծախքեր—որոնք պահանջում են նիւթական միջոցներ: Ապա ուրեմն բաւարար չի կարելի համարել ուսուցիչների այնչափ վարձատրութիւնը, որ նոցա միջոց չի տալիս հոգեոր սնունդ ձեռք բերելու՝ զրբեր հայթայթելու, որ զրկում է նորան ծանր աշխատանքից յետոյ հոգեով ու մարմնով հանգիստ առնելու, բարեկամների հետ կենդանի յարաբերութիւն պահելու և մարդավարի կեանք վարելու հնարաւորութիւնից:

Ուսուցչի ամենամեծ առաքինութիւնն ու զարդը համեստութիւնն է, բայց անտեղի այնտեղ, ուր ամբարտաւան վարմունքի է հանդիպում:

Փոքրօգիները ոչ մի տեղ այնքան վնասակար չեն, որքան գպրոցներ կառավարելու գործում:

Դպրոցական գործերում և կրթութեան ասպարիզի վերայ շարժելի վատ սկզբունք է, Բոլոր ծառերի վերայ միևնոյն կեղևը չէ, ասում է լեւսսինց և հաստատում, որ հէնց դորանումն է գեղեցկութիւնը:

Յարգանք գէպի ժողովուրդը բարձր դասակարգի կողմից, բարեխիղճ վերաբերում գէպի ազգի իսկական շահերը, մարդասիրութիւն ու քաղաքակրթութիւն տարածելու ջանք—սոքա են գլխաւոր պայմաններն այն գործի յաջող զարգացման, որին ծառայելու կոչուած են դպրոցն ու ուսուցիչը: *

Գ. Ղ.

* Թարգմ. Вѣстникъ Воспитанія. 1897, октябрь.

ՅԱՆՔԼԱՐԱՆԻ ԱՐԵՎՏԻ 1898 Թ. ՕԳՈՍՏՈՍ.

(Շարունակութիւն) *

ԸՍՏ ՍԱՐԳԻՍ ԵՐԷՑԻ՝ ՄԵՇԻՆ ՎԱՐԴԱՆԻ ՅՕՐԻՆԱՄ

ՎԵՐԱՅՄԱՆ ԽԱՉԻ

Բ. ԱՆՈՒՐ.

ԴՅ. «Գաւազան գորտիկան» Տէր յերկնից-ից կրճատած երեք տները

Գաւազան: Սա է, գէն: Սա է աթոռ: Սա է սեղան: Սա է կարապետ:

«Սա է թագ պարծանաց կաթնուղիկէ կեկեղեցւոյ. և ի սմա է թագաւորեալ քրիստոս որդին աստուծոյ. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Սա է բուրվառ խնկալի. և ի սմա հոտոտեցաւ տէրն ի հոտ անուշից. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Սա է զիւաց հալածիչ և պարխոպ ամբութեան հաւատացիլոց. և սովաւ յաղթեացուք անաւրէն թշնամւոյն:

Գ. ԱՆՈՒՐ *

ԴՅ. Ա. «Քառակերպեան աթոռ ակն

1. ԾԻ.— և ի սմա է բուրեաց հոտ անաւորեան.

* Ի գիտութիւն մեր բնթերցողներին հարկ ենք համարում յայտնել, որ Վերացման խաչի հեռեւեալ ձաշուքը և Մանկութեւնը, յձ. «Ապաւինեցաք ի խաչ քո» յայտնի շարականի պէս ունին միօրինակ տաղաչափութիւն, և վերջանում են այս միօրինակ նախադասութեամբ՝ «ընդ անկարմնոցն դասուցն քոց երկրպագանմամբ», որոնք են՝

* Տես «Արարես» 1898 թ. համար է. եր. 325:

«Գաւազան» է— ԺԵ 176 թ. ԻԴ 187-թ. ԽԲ 250-ա. ԾԻ 281-թ. ԼԳ 179-թ. (ԺԵ, ԻԴ, ԽԲ, ԼԳ, ունին միայն Բ տունը):